

ՊՐՈԽ. ԱՇԽԱՐՀՅԵԿ ՔԱԼԱՆՔԱՐ

ԱՐԱԳԱՆԸ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԹԵՂՎԱՆ Հ ԱՍԻՐՎԱՆԻ ԲՐԱԴԻ
ՅԵՐԵՎԱՆ

1935

ՊՐՈԽ. ԱՇԽԱՐՀՅԵԿ ՔԱԼԱՆԹԱՐ

ԱՐԱԳԱԾ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԵԶ

ԿԵՏՎԿԱՆ Հ ԱՍԻՐԻԿԱՈՒԲՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1935

902.6 (47.925)

9395-56.

Ф-14 Фильтр, 6.

Фильтр, 6.

1н.50г.
3.56

215

12/1

3.56

ՀԱՅՀ ՊՐՈԼԵՏ ՏԱՐԻԶԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՕՊԵ)

These groups

ՊՐՈՅ. ԱՇԽԱՐՀՎԵԿ ՔԱԼԱՆՉԱՐ


1951.9.7

Q-14

A 1
2094

ԱՐԱԳԱԾԵԼ

Ակնարկ նշա պատմական նօանակուրյան յիշ նյուրտկան
կուրտարայի հուշարձանների մասին



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1935

Սբբագրիչ՝ Ա. ԳԱԼԱՇՅԱՆ

Դլավլիտ № 8677, հղատ. № 3110, ուսավեր № 1258, տիրամ 3000
Հանձնված և արտադրության 10 ոգոսառուի 1934 թ.

Ստորագրված և տպագրության համար 10 փնտրվարի 1935 թ.

Գետհրատի տպարան, Յերևան, 11 Դնունի № 4



Արագածի գագարը

Արագածը բնական իր հարսառություններով և պատշաճական նշանակությամբ, վոր ունեցել է Հայաստանի քնակչի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական հիմքում անցլալում, ինչպես նաև լայն ոգտագործման իր ներկայիս ու ապագայի հնարավորություններով՝ ունի խոշորագույն դիտական արժեք ու կարևորություն։

Այդ իսկ պատճառով վերջին տարիներս Խորհրդական Հայաստանի կողմից իրար յետելից կազմակերպված գիտական եքաղեղիցիաները նպատակ են ունեցել նրա բազմակողմանի ուսումնասիրությունը — հնագիտական (1922 և 1924 թ.), կենդանաբանականութաբանական (1924 թ.), հիդրոլոգիական — գեոլոգիական-հանքարանական (1926—1930 թ., թ.), ողերևագութաբանական (1927 թ.) և այլն տեսակետից։

Արագածի դերն ու մասնակցությունը մեր շինարարության մեջ իր ներկա հտապում արդեն խսկ իր ռեալ արտահայտությունն ե ունեցել Ալզր բնով, Անի—սկսմազալով, Արթիկ-տուֆով, ողեր և ութաբանական կայանով Սև լճի մոտ, կոմ. ավանների կառուցումով, Արագածի անամապահական սովորով, մեղվարուժական կայաններով, և այլն և ալլն, ինչպես նաև նրան վերաբերող կապիտալ ուսումնասիրությունների հրատարակությամբ (Գիտությունների Ակադեմիայի կողմից):

Արագածը Խորհրդ. Հայաստանի ամենաբարձր և միաժամանակ շատ լայնանիստ լեռն ե, վոր բարձրանում ե աստիճանաբար, փոված լանջերով: Իր ընդարձակ հարթավայրերով ու հովիտներով, ինչպես նաև հարուստ բուսականությամբ ու հոսուն ջրերով՝ նա շատ վաղուց դեպի իրեն ե զբավել մարդուն, տալով նրան ապրելու և ստեղծագործելու լայն ու բազմապիսի հնարավորություններ:

Իր տեղադրությամբ կազմելով մի միջնաշխարհական շրջապատված ե ամեն կողմից խիստ ընակված վայրերով, վորոնք դարերե ի վեր նստել են նրա ստորոտում, փեշերի ու լանջերի վրա և ոգովել նրա սռատ բարիքներից:

Այդ տեսակետից Արագածը Հայաստանի բնակչությամար հանդիսացել է կենտրոնատեղի, նախ իրը և ամուր վայր — ինքնապաշտպանության համար, և ունեցել ե իր քաղաքական առաջնակարգ նշանակությունը, ապաձյունի և ջրի հսկա պաշտպով — մայր և աղբույր հանդիսանալով ջրաբաշխական սիստեմների համար՝ իր տնտեսական ու կուլտուրական խոշորագույն դերն եւ խաղացել:

Նրա այդ ընդհանութ ջրապաշարից ծնունդ առնող գետերն ու բազմաթիվ գետակները, վոր վառովման աղբալուր են հանդիսանում շրջապատի ցածրահարթերի համար, հոսում են խորխոր ձորերով — ժայռապատ ու այրաշատ Այստեղ մարդն իր առաջին խմել որերեց գտել ե և՛ բնակարան, և՛ ինքնապաշտպանության ամեն հարմարություններ, ուստի և հնագույն ժամանակներից մարդկային հասարակությունն այստեղ իր զարդացման բոլոր ետապներն ե ապրել և թողել իր յերկարաւունքի իրական վկանները — նյութական կուտուրալի բազմահազար տվյալներով. նա, այդ կլանու, իր արտահայտումն ե ունեցել նաև հնագույն գրավոր աղբյուրներում, ինչպես և ժողովրդական բանահուսության մեջ — վեպի ու յերդի, վորտեղ Արագածն իր մի կողմու և բարձրանում ու շեշտվում:

Նյութական կուտուրայի տվյալները նրան ներկայացնում են իր ամբողջ հասակով, հայտարերելով նաև մի ամբողջ շրջան նրա կլանքում, իր արխայիք ֆորմացիան, վոր մութ ու անհայտ եր դիտությանը և այժմ միայն սկսում ե ճանաչվել զերծին տարիների աշխատանքներով, նրանց (այդ նյութ. կուլտ. տվյալների) հետ անմիջական շփումների հետևանքով:

Նախքան այդ նորահայտ շրջանի և նրան վերաբերող տվյալների մասին խոսելը, մի համառոտ ակնարկով տեսնենք, թե ինչպես ե պատկերանում Արագածը պատմության մեջ ըստ այն աղբյուրների, վորոնք միայն մինչ այժմ մատչելի եյին գիտությանը:

Այդ պատմությունը վերաբերում է գլխավորապես Արագածոտնին, այսինքն Արագածի այն շրջանին, ուր

կենտրոնացած են մշտական բնակավայրերը, այն և նրա ստորոտը («վոտն Արագածի»)՝ լանջերը, փիշերն ու մոտ շրջապատը՝ հարավային կողմից յին կողմից Արագածոտն հին Հայաստանի վարչական բաժանմանը հատուկ զավառ էր կազմում Արարատյան նահանգում. այդ գավառին համապատասխանում ե մեր բաժանումուն Եջմիածնի գավառը, վորի մեջ մտնում են ներկայիս Թալինի, Ղուրդղուլու, Սամաղարի, Վաղարշապատի և Աշտարակի շրջանները:

Արագածի մյուս սահմանները կազմում են արեւամտյան և արևմտահյուսիսային կողմից՝ արևելյան Շիրակը—Լինինականի դավառը, ներկալիս Մոլլագյողչա, Թավթառի, Հաջիխալիլ շրջաններով, իսկ հյուսիսային և արևելյան կողմից՝ Նիգ-Արարանը և Կոտայքը:

«Անրագած կոչումով հնումն, ըստ յերեսույթին, հասկացվում եր լեռ՝ հարավից դիտված, քանի վոր նրա հյուսիսային յերեսը համարվում եր Արագածի թիկունք:

«Արամայիս... զորդին իւր զՇարայ... առաքէ... ի զաշամի մօտաւոր արդաւանդ և բերրի... ի թիկունք հյուսիսայ լերինն, որ անուանեցաւ Արագած, յորոյ անունն զդավառն ասեն անուաննեալ Շիրակ» (Խորենացի—Ա. 12):

«Դնացեալ ի վերայ Փիլիպոս ի Նիգ (Արարան) դաւառի և պատեալ զթիկամը ք լերինն Արագածայ երթեալ անցանէ ընդ Շիրակ» (Խորենացի Պատմ. գլ. 24):

Աս ցույց ե տալիս, վոր կլանքի կենտրոնը լեռան հարավին եր, այստեղ ե նա սաղմնավորվել և հետազում իլ պատմական սլրոցեսի կենտրոն հանդիսացել:

Այս տեսակետից չափազանց բնորոշ ե, վոր Արարատի հարավային լերեսն ել նրա թիկունքն ե:

«Ելանէ արքայ (Արշակ Բ.) զ թիկա մը ք Մասեաց
տանել որսո յիւրում սիրեցեալ դաւառին ի Կողոյովուհի»
(Խորինացի, Գ. 23):

Պարզ է, վոր հալկական կյանքի կենտրոնը համարս-
վում եր Արարատի և Արագածի միջնաշխարհը, իսկ Արագածի հլուսիսը և Արարատի հարավը նրանց
համար թիկունք են:

Սա յեւ «Արագածոտնը» և Հին Հայաստանի պետականության մեջ առաջնակարգ գեր խաղացողն ամ-
բողջ պատմության ընթացքում։ որա բնական ամ-
բություններն ու կենսական այլ տվյալներն ողտա-
դործվել են ըստ ամենայնի և ավելացվել ու լրացվել
ձեռագործ հարմարություններով։ Դարերի ընթացքում
կատարվել ե րազմապիսի և խոշոր չափերի հասնող
շինարարություն։

Դիտությանը մատչելի ամեն ահին գրավոր աղ-
բառուն Արագածի, վերաբերյալ այն սեպագիր
տվյալներն են Հին Հայաստանի խալդական արձանա-
գրություններից, վորոնք կապվում են խալդական ար-
շավանքների ժամանակի հետ (8-րդ դար մեր թվակ-
առաջ)։ Այդ արձանագրություններից մեկը (1884 թ.
դանիված), վոր պատկանում է խալդ նվաճողներից
Արդիշտիին՝ Մենուալի վորդուն՝ գանգում և Արագա-
ծի հյուսիսարևմտյան լանջերում Դուլիջան գյուղի
մոտ՝ Կարկաչան (Կարանդու) գետի վրա, վոր հոսում ե
Մանթաշի ձորով։ Ըստ այդ արձանագրության, Ար-
դիշտին նվաճել ե Կուլիսինի յերկիրը և Դուրուրանի
քաղաքը¹⁾։

1) М. В. Никольский — Кавказообразные надписи Закавка-
зья, Мат. по археол. Кавказа, вып. V, 83—84

Համաձայն ընդհանրացած սովորության, վորով իսալդ տիրողներն իրենց արձանագրությունները գրում եյին հենց նվաճված յերկրում, վորին նաև վերաբերում եր, իբրև մի պաշտոնական ակտ—ռազորտ կալդի աստծուն՝ կատարած հաղթանակի համար՝ պետք եւ ընդունենք, վոր Արքիշտին վերցրել եւ Արագածի հենց այդ մասը, վոր, իբրև վարչական միավոր, այն ժամանակ կոչվում եր «Կուլիախինի». այդ անվան մնացորդ թերևս կարելի յե համարել ներկայիս Ղուլիջանը, իսկ Դուրուբանի քաղաքի հետքերը պետք եւ վորոնել հենց նու, յն տեղում, ուր գտնվում եւ այժմ արձանագրությունը¹⁾:

Խալդերի նվաճողական ընթացքն ուղղություն ունի հարավից դեպի հյուսիս՝ Բիախինալից—Վանից դեպի Հայաստան:

Արաքսի հովտին ու Արարատյան դաշտին տիրանալուց ու այստեղ հիմնավորվելուց (Դաշբուռուն, Արմավիր) հետո, նրանց առաջին գործն եւ լինում Արագածի շրջանի գրավումը: Մինչև Արագածի թիկունքն անցնելը, անշուշտ, խալդերին անհրաժեշտ եր տպահովված լինել Արագածի հարավակողմի հանգեղ, կառկած չկա, վոր այդ կողմն արդեն նրանց ձեռքումն եր նախքան կուլիախինի նվաճումը:

Խալդերի ճանապարհը մինչև Ղուլիջան կարող եր մինել Արագածի արևելյան ստորոտով: Արարանով—Թասախի հովտով, վորը սկիզբն եւ առնում Արագածի հյուսիսում և պատելով նրան արևելյան կողմից, գնում եւ հարավ և հասնում ու թափվում Արաքսի մեջ: Այդ-

1) Никольский ibid—71—73.

պիսով Քասախը հանդիսանում է բնական և ամենահարմար հաղորդակցության հանապարհն Արաքսի հովտից մինչև Արագածի թիկունքը։ Այդ մինունույն ուղղությունն ունի և ներկայումս գոյություն ունեցող խճուղին [Սարդարաբատ (Արմավիր)՝ Վաղարշապատ-Աշտարակ-Արարան - Լինինական], զորով և սարդարում և նրա հին ծագումը։

Մի այլ սեպաղիր այրյուր այդ միջավայրում գտընված — նույն Արգիշտիի յերկրորդ արձանագրությունը Մարմաշենում (Ղանլիջա)՝ ցույց և տալիս, վոր խալդերն Արագածի նվաճումն ամրողացնելուց հետո Ալ ավելի տոաջ են անցել դեպի հլուսիս և վերցրել են այդտեղ գանվող «Իրդանիունի քաղաքը», խիլով նրան իշկիրուելու յերկրից» (նկ. 2). Նվաճված այս ամբողջ շրջանը նրանք անվանում են «յերկիր Երաք-իւ¹)։

Նկատի ունենալով, վոր Մարմաշենի արձանագրությունն իր գանված տեկով արդեն մատնանշում և հիշատակված յերկրի («Երմք») տեղը, վորը Արագածի կողմից իր վերին ծայրով հասնում եր մինչև Մարմաշեն, տեսնում ենք, վոր այդ հենց Շիրակա դաշտն և (կամ գուցե Արագածը և Շիրակն ի միասին²), վորին և շտապիլ են տիրել խալդերը։ իսկ Իրդանիունի քաղաքն ամենայն հավանականությամբ համապատասխանում է Մարմաշենին, ուր մինչև այժմ ել դեռ պահպել են ուրարտական շրջանի ընդարձակ ամրոցի ավերակներն Ախուրյանի վրա։

1) М. Никольский, 89. И. Мещанинов – Халдоведение, 206-7

2) Հավանական և «Երաք» անունից առաջացած լինեն մեր «Արագ—ած» և «Շիրակ» անունները, իրեն բարբառային առանձնահատկություններ, վորոնց ծագումը նախահայկական եւ

Հուլիջանի և Մարմաշենի արձանագրություններն ոգնում են մեզ ավելի լավ հասկանալու խալդերի ռադական պլանը և նրանց գործողությունների քաղաքական ու տնտեսական իմաստը:


Արաքսի հովտից հետո՝ Արագածի նվաճումը համարվելու յեր անհրաժեշտություն, վորպես Հ-ս Հայաստանի միջնաբերդի, վորով միայն կարող եր պաշտպանված ու ապահովված լինել իրենց գլխավոր շտեմարանը — Արաքատյան դաշտը: Աղա նաև տեղ դառնալով յերկրորդ նշանավոր շտեմարանին — Շիրակադաշտին (այս դեպքում հավանաբար շարժվելով, բացի Քասախի ճանապարհից, նաև Արագածի արևմտյան կողմով — Ախուրյանի վրայով), խալդերը միաժամանակ ձեռք են ձգում նրա պաշտպանության կարեվորագույն դիրքը — Մարմաշենի ամբողը (Իրդանիունի քաղաքը), խլելով նրան «Իշկիդու-լուաների յերկրից»:


Արագածի և Շիրակի (յերկ. Երաք-ի) քաղաքական-տնտեսական այդ առաջնակարգ նշանակությունն եր անշուշտ պատճառը, վոր տեղացիների հաճախակի ըմբռուտացումներին ի պատասխան խալդերը, մանավանդ Արգիշտիի վորդու՝ Սարդուրի ժամանակ, մի շաբանդամաներ կրկնում են իրենց արշավանքը դեպի «Երաքի» ավարի, ավերի ու կրակի մատնելով ամբողջ շըր-ջանը:¹⁾

Իշկիդուլուների յերկրի տեղադրությունը հեշտապես կում ե վորոշել՝ ի նկատի ունենալով խալդերի բռնած

1) Մարդուրի սեպագիր տարեգրությունը Վանում — H. Mapp, Археол. Экспедиция в Ван, Л. 1922 г.

Жи. 2. Уврятост въ бунар при разкопките въ училището въ днън. (Бунар № 1, разкопки 1938 г.)





ուղղությունն ու նվաճումների հերթական ընթացքը՝
սա կարող է լինել Մարմաշնից ավելի հուսիս այն
լինուու յերկիրը, վոր համապատասխանում է ներկա-
լիս Աղբաբային, Դղղոչին: ¹⁾

Արագածի վերաբերլալ մյուս հնագույն գրավոր
աղբուրը մեր մատենագրության մեջ Մովսես Խորենա-
ցին ե: Այստեղ Արագածի հիշատակությունը կապվում
է Հայկի վորդիների տարածման հետ, այսինքն եպի-
քական բնույթի այն սկզբնական աշխարհաշինության
հետ, վորով Խորենացին սկսում է Հայաստանի և հա-
սց ողատմությունը:

«Իսկ Արամանեկայ առեալ զամենայն բազմու-
թինն՝ խաղայ յարեւելս նիւսիսոյ, եւ երեալ իջա-
նեկ ի խորին դաւավայր մի [Արաբատյան դաշտ], ի

1) Այս յենթադրությունն, ըստ յերեսութին, հիմնավորվում
է նույն քանի մի տեղեկություններով այդ շրջանի ներկայիս տո-
պոնիմիկայից, վորոնք հիշեցնում են Խշկի-զուլու անունը (արձանա-
դրության մեջ ըստ իդիոդրաֆիկ նշանի—և՝ ժողովրդի, և տեղի
տնօւն, նկատելով բարդ բառ՝ կաղմված իշկի և գուլու [կամ գոլո]՝
առարկեր խոսքերից)—այսպես՝ Գյուլիք—բուլազ—Մարմաշնից մի
քիչ հյուսիս, Կառուի մոտ. մի այլ Գյուլիք—բուլազ՝ Դղղոչի շըր-
ջանում, Ամասիայից արեելահյուսիս, մեծ ճանաղարհի վրա. Գյու-
լիք՝ Աղբաբայի զրջանի հյուսիսային մասում, Արփա լճից արե-
վելահյուսիս. նույն տեղում Գյուլիքա—(Գյուլիք-ջա) — Գյուլիքից
արեմուտք, նույն լճից ուղիղ հյուսիս. Գելլար—լեռն Զարիշատում,
Զըլզը լճի մոտ արեելահարավային կողմից, վորից վոչ հեռու գե-
ղի արեմուտք Դաշքերփիի մոտ, ինչպես հայանի յե, գանգում և Ար-
դիշաիի վորգու՝ Սարգուրի սեպագիր արձանագրությունը (H. Marr
Надписъ Сардуре из Дашкерпи), և նախառարարական ամրոց
վորին, ըստ յերեսութին, նա տիրել ե. նույն Զարիշատի արեմուտ-
քում Դելաք դյուզ, իսկ նրանից հարավ, գետախառնուրդի մոտ—
նաշողի (Ողճի-Ռճդի-Իշկի) գյուղի

բարձրագագարանց պարսպեալ լեռանց..... այլ հարտակայինն արեգակնանեմ լեռան, սպիտակափառ ունելով գագարն [Մասիս].... Յայսմ խորօւթեան դաշտի բնակեալ Արամաննեկայ՝ սինէ զմասն ինչ ի նիւսիսոյ կողմանէ դաշտին, եւ զսն լեռինն ի նոյն կողմանէ, եւ զիւտանն անուանէ յանկագոյն յիւր անուն Արագած, եւ զկալուածսն՝ օսն Արագածոյ»:

«Եւ որդի նորա Արամայիս սինէ իւր տուն բնակաւթեան ի վերայ ոստոյ միոյ տռ եզերք գետոյն, եւ անուանէ զնա յիւր անուն Արմաւիր... Եւ զարդի իւր զնարայ... առաքէ ամենայն աղխիւ իւրով ի դաս մի մօտաւոր, տրգաւանդ եւ բերքի, յօրում զնան ջուրք ոչ սակաւէ, ի բիկունս նիւսիսոյ լեռինն, որ անուանեցաւ Արագած. յօրոյ անուն եւ զգաւառն ասեն անուանեալ Շիրակը (Մ. Խորենացի—Պատմություն, Ա. 12, եջ 38 ժդ և 39—40).

Խորենացու ողատկերացը ած Հայկական պատկերի շարժումների ու տարածման նկարգը ճիշտ համապատասխան է այս աստանում և իւ ալ դասւը ամբողջ հյուսսիսային Հայաստանի ընթացքին ամբողջ հյուսսիսային Հայաստանի գերաբեկությանը մենք յերկու դեպքումն ել տեսնում ենք, բացի միւսնույն ուղղությունից, նաև ճիշտ միւսնույն հերթականությունն ու տեսպությունը (4—5 սերունդ, մատ մի դար) և անշուշտ նաև սիւսնույն նպատակը — տեր դառնալ յերկրի զլսավոր կենսամբարներին (կենաւաշտեմարաններին) դրավելով նրա ամրությունները — կարեռագույն ռազմական դիրքերը. այսպես՝ առաջին

նվագ դրավվում և Արարատյան դաշտը՝ Արաքսով և Արարատյան բարձունքներով. յերկրորդ նվագ՝ Արադը—Քասախի հովտով և Շիրակա դաշտը. և ապա, լեռնորդ նվագ՝ Սևանը (Սևանա ավաղանը)—Գեղամա—Դեղարքունյաց լեռներով:

Հատուկ ուշադրության արժանի յե Արմավիրի դերը, զոր յերկու դեպքումն ել հանդես և գալիս իրեն սկզբնական քաղաքական կենտրոն և կապող ողակ՝ ըոլոր հնագույն եպօխաներում:

Արագածի առաջնակարդ քաղաքական և տնտեսական գերն ու նշանակությունը մենք տեսնում ենք նաև ցալտուն կերպով արտահայտված Հայոց պատմության բոլոր ժամանակաշրջաններում:

Ֆեոդալական շրջանի առաջին ետապում Արագածն, իրեն արքունի սեփականությունն, Արշակունյաց պետականության ակրոպոլն և հանդիսանում. այստեղ զանը վում են պետական զաստակերտներ, բերդեր, ձմեռոցներ, զորանոցներ, թագստոցների Աշնակը Արշակունյաց թագավորների ձմեռոցն ե, Արուճը՝ ձմեռոց, արքունի զորանիստ, ազատների բնակատեղի. Կոշը (Կուաշ աւան) նրանց գաստակետ, այնտեղ ապրել են Տիրան թագավորը և նրա թոռ Գնելը (Խոր. Գ—22). Տիրանը մեռնում և թաղվում ե Կոշում (Խոր. նույն տեղում). Աղյու ամբոց ե, և այնտեղ են ամփոփվում Արշակ Բ-ի ժամանակ Արշակունյաց նախկին թագավորների վոսկընները, վորոնց պարսիկները հանել ելին Դարանաղիի Անի ամրոցից—արքունական գամբարանից, և ուզում ելին իրենց հետ տանել Պարսկաստան [Փ. Բյուզանդ, Մ. Խորենացի]¹⁾: Աղյում Արշակունյաց այդ զամբա-

1) ... և զոսկերս թաղաւորացն... թաղեցին յաւանին Աղյու որ յատին Արագած կոչեցյալ լեռին» (Մ. Խոր. Գ. գլ. 27):

բանը — կատաքոսմբային տիպի — կա այժմ ել, վոր իր տիպով միանգամայն համազատասխանում է Դ-րդ դարու վերջին:

Արագածի այդ կողմը՝ Աղցի — Կոշի շրջանն առանձնապես հարուստ ե վիմափոր և գետնափոր ամրություններով, վորոնք քարայրերի մշակված ձեերն են, մեծ տարողությամբ, բազմաթիվ բաժանմունքներով, քարե դրներով և այլն՝ հարմարեցրած պաշտպանության համար. իրրե պատսպարաններ — թագստոցներ ե, ըստ յերևույթին, ծառայում ենին վտանգի ժամանակ իրրե ասղատարաններ, հավանաբար ընտանիքների համար, ինչպես նաև շարժական ինչքի, զանձերի և ալին. այս թագստոցները, ըստ իրենց ունեցած հարմարությունների, ապահոված են յեղել ջրի և ուտեսափ անհրաժեշտ պաշարով:

Արագածն իրրե ամրություն ոգտագործվում եր ըստ ամենայնի լայնորեն, վորի համար նա ուներ շատ մեծ և բազմատեսակ հնարավորություններ, ինչպես Փալստոս Բյուզանդն ե, իրրե ժամանակակից, նկառագրում — «Յամուր ի գիւղն, որ Աղձն անուանեն... կալին ի խինձս, ի գոգս, ի ծոցս, յանձուկս, ի դժվար լերինն մեծի, զոր Արագածն կոչեն» (Փ. Բ. Պատմ. Դ դպր. զլ. 24):

Բացի այդ բնական ամրությունների հարմարեցումն ու ուստագործումը, նամանավանդ արհեստական կերպով կառուցված ամրոցների, բերդերի շատությունն Արագածոտնում (Արագածի վըա)՝ լավ բնորոշում ե այն դերը, վոր խաղացել ե նա, իրրե ամրությունների աշխարհ, ամրող պատմության ընթացքում:

Արագածի վրա յերբեիցն յեղած բերդերի մասին
վկայում են կամ նրանց ներկայիս իրական մնացորդ-
ները, յերբեմն նույնիսկ ընդարձակ և բավականաչափ
լավ պահպանված ավերակների ձեռվէ, կամ հիշատա-
կում են գրավոր աղբյուրները: Սրանցից Անրերդն ու
Թալինը բերդաքաղաքներ են, Աղցը հիշվում ե Բյու-
ղանդի կողմից իրրե ամրոց, վորի մնացորդները կան
այժմ ել. Ռշականն, ըստ Յեղիշեյի, ամրոց ե յեղել
ոկզրում, վորի ավերակները մնում են դեռ Քասախի
ձորի բերանին, ներկայիս դյուդի հարավ արևելյան կող-
մում: Բյուրականը նմանապես իրրե ամրոց ե անուն
հանել պատմության մեջ. Աշնակը, Սերկելին (նկ. 3),
Արտրանը, Փարուին (նկ. 4), Աշտարակը, Կոշը, Հառի-
ճը, Աղջաղալան և այլն՝ մինչ որս ել պահպանել են
իրենց ամրոցների խոշոր շենքերը: Յեղվարդի ու Կար-
քիի մասին հիշատակություն կա, վոր յեղել են շուր-
ջանակի պարսպված:

Այսպիսով Արագածի բոլոր բնակատեղիներն ան-
խըտիր կամ բերդաշեն են (բերդաքաղաք, կամ բեր-
դագոր բնակատեղի) կամ, ավելի փոքրերն իրենց կից
ունեն ամրոցներ (միայն ուղմական նպատակների
ծառացող, առանց մշտական բնակչության), կամ
նույն նպատակին հարմարեցրած այրեր:

Վերջապես բոլոր վանքերն անպայման պարսպված
են, ամրոցի համար անհրաժեշտ հարմարություններով
և կարիքի գեղքում միշտ կատարել են բերդի դեր:


Արշակունիներից հետո, Գեղարքունիքի համար ան-
հայտնի առաջանաւում (V—IX դարերում) տեսնում
ենք Արագածին ապավինած մի քանի նախարարական
տներ, կենտրոնացած այն վայրերում, ուր իրենց շի-

նարարության մնացորդներն ենք զտնում—Գնունի
(Մաստարայի շըջ.), Ամատունի (Ոշականի), Կամսա-
րական (Թալինի), Մամիկոնյան (Արումի, Յեղվարդի):

Հաջորդ՝ բագրատունյաց շրջանում **IX-XI** դ. դ.
թեկուզ և Արագածոտնը իր տեղադրությամբ չի հան-
դիսանում նրանց պետության կենտրոնավայր և ան-
միջապես չի կապվում իրենց ընտրած քաղաքական
կենտրոնների (Շիրակավան, Բագարան, Կարս, Անի)
հետ, բայց և այնպես նա և՛ ալդ պետության գլխավոր
ամրությունն ե, վստահելի հենարանը, գոնե առաջին
Բագրատունիների որով. Սմբատ Ան Արագածին
(Վժան-Ուջան) և ապավինում՝ Աֆշինի հետ ունեցած
կոփների միջոցին: Այստեղ ենք տեսնում նաև հոգևոր
գիեղալին՝ Հովհաննես կաթողիկոսին (Դրասխանա-
կերտցի պատմաբանին) իր սեփական ամրոցում—Բյու-
րականում, ուր նա պատսպարվում եր Յուսուփի և
Նորի հետապնդումներից և իր պատմության մեջ տալիս
է կենդանի նկարագրությունն ամրոցի մի պաշարման
արաբների կողմից:

X-XI դարում նախկին իշխանական տների՝ տեղ-
մենք տեսնում ենք միայն Պահլավունիներին—Ա, ու-
բերդում (նկ. 5). սա առաջնակարգ դիրք եւ սուս-
նում Արագածի բոլոր ամրոցների մեջ, Արագածոտնի
փոխարեն Ամբերդի անունով եւ կոչվում ամբողջ պա-
վառը, զոր յենթարկվում եւ վահրամ Պահլավունուն
(տես Ամբերդի արձանագրություն):


XI-XIII դարերում Բաղրամունյաց պետության
անկումից ու նրան հաջորդող խառն բաղաքական
գրությունից հետո՝ Հայաստանի մաքրումն ու հայկ-
պետության ռեստավրացիան Զաքար ելի և ի մա-



Նկ. 3. Մերկածին տամբուց՝ վաղ գեղողական շրջանի (Ժամանակակից Ա. Քայլաթարի)




Նկ. 4. **Փարպի.** Միջնադարյան ամրոց՝ բարե դռնով, Անրսում
բազիլիկա Վ դարու (փառք Ա. Քալանքարի)





Նկ. 5. Ամերեր. Բերդագուղաքի պարիստության տևալում. (Ֆոտո Ա. Գալստյանի)



ն և լի ձեռքով՝ սկսվում և Արագածով. Ռազմագետ Զարարեն Արագածին տալիս և առաջնակարգ նշանակություն Հայաստանը զբավիելու գործում, և առաջինը վերցնում և Ամրերդը [1196 թ., իսկ նրանից հետո միայն՝ Անին—1199 թվին]¹⁾; Ալդ խնդրի զբական լուծումն ըստ լեռնութիւն դիտվում և Զաքարելիի կողմից իրեւ Կախապահման ամբողջ գործի հաջողության. և հաղթության ասիթով կանգնում և «հաղթության արձան»²⁾ (նկ. 6):

Զաքարեն ամեն կողմից ամրացնելով Արագածը, իր յեղբոր՝ Իվանեցի հետ շինում և նրա հյուսիսարևմտյան սոորոտում Հառիճա ամրոցը և վանքը, վոր պահում և Մանթաշի Զորի բերանը. այստեղ են գտնվում յերկու յեղբայրների բարելինք արձանները (նկ. 7):

1) Իգանելի պատմական արձանադրությունը հաղարծինում

«Կամաւն ամենակալին» Ալ այս մեր զիր յիշատակի է եւ արձան մասնօքնաւոր որդեաց մեծին Սարգսի յազգի Բագրատունեան իւ ան ի եւ Զաքար է ի յոթամ նախանամութիւն Ալ ենաս յարացած եւ ես սիրել սեփական ժառանգութեան նախնեաց մերոց եւ ես ի ձեռս մեր յառաջ զանանի կ դ դ ե ա կ ն զ Ա ն բ ե ր դ ե ւ բազաւորանիս Տաղաքն Անի, եւ ապա զամուրն Բջնի, զՄարանդ մին չի եւ Գաւազանի ի Թաւրեծ, զԿարնոյ Տաղաք Մինչեւ ի Եղար, զՆաքի եւ զԵրուան, զՊարտաւ մինչեւ ի Բելուկան եւ զայլ բազումս իւրեանց սահմանակ, վոր աւելացդ համարեցաք յիշատակել. այլ եւ անբականալին Ած սիրեց զբագ պարծանաց զիսո իմս զԶաքարի աւ կայից առ ինքն յորս ձեռն եղեւ արիւթիւնո...»:—(Ընթերցումն իմն և բնազրից. Ա. Պ.)

2) Ներկայումս Ինարիվում դանվող արձանը խաչքարի ձեռվ շուրջանակի արձանադրած—

«Ի Ութ բուտկանութինս ես Զաքար է ամիր սպասարշ Հայոց եւ Վրաց, որդի մեծին Սարգսի, առի զանափի ամրոցս զԱնքերդոյ յաղախնայծին որդոցն Հայուրու, որ... (քարը կոտրված)...» ի սմա ի կորուս քրիստոնեց

Եւ յաւեր եկեղեցեց Եւ ետու առնել զնէ(ամս)։ (Գալ-
ա-ե. Հովսեփիան. Աաղբակյանք կամ Պոռշյանք, եջ 8—9):


Ամբերդի—Արագածոտնի նվաճումից անմիջապես
հետո Զաքարեն վերակացու յե նշանակում վաչե-
ցին—«... կոչեցա ի վերակացութիւն դավառիս...»¹⁾)
վորը և այնուհետև կառավարվում ե նրա տոհմի՝ Վա-
չուտյանների ձեռքով մի ամբողջ դար՝ լինելով սեփա-
կանություն Զաքարյանների.— «Շահնշահ (Բ.) սեփա-
կան տէր դավառիս Անբերդո»²⁾):

Բացի Զաքարյաններից և Վաչուտյաններից, ալբ-
դավառում (XIII-XIV դ.) տիրող տներ են հանդիսա-
նում նաև պարոն Սահմադինը և նրա ժառանգները—
Ռշականում, և Ազիզբեկն ու նրա տոհմը—Յեղվարդում:
ինչպես այդ յերեսում ե նրանց արձանագրություննե-
րից՝ իրենց շենքերի վրա, այդ կենարոններում:

XIV դարում տեղի ունեցող քաղաքական խոշոր
իրարանցումները բոլորովին փոխում են հասարակա-
կան հարաբերությունները, վորին հետեւում և Հայաս-
տանի այլ վայրերի թվում նաև Արագածոտնի տնաե-
սական-կուլտուրական անկումը: XIV դարի կեսերից
հայկ. տիրող տներն այլևս չեն հիշատակվում արձա-
նագրություններում իրեւ շինարարող և ըստ չերեւույ-
թին նրանք այդ ժամանակից արդեն դադարում են
քաղաքական վորեւ ե դեր խաղալուց: 1358 թվին մի
արձանագրություն, վոր գտնվում ե Բիջնիում և պատ-

1) Արձանագրություն Վաչեյի—Հոհանավանքում (Ալիջան—Այ-
րարատ, 168). ինչպես նաև Մամախաթունի արձանագրությունն իր
կառուցած տաճարի վրա՝ Տեղերում (Դըղըր) իր ամուսին Վաչեյի
մասին. «...որ էք կարգել հրամանաւ Զաքարէի վերակացու դաւա-
ռիս...» (բնթերցաւմն իմն ե. Ա. Ք.):

2) Արձանագրություն Սաղմոսավանքի, Ալիջան—Այրարատ,
եջ 168.



Նկ. 6. Զանարեւ Սպասալարի կանգնած «հազրուրյան հուշաբանը»
(տես արձանալիր. էջ 25)

Նկ. 7. Զանգարքի և թումանյան վաճառքատեսական պալատի առաջնաշենքը՝ պահպանական վաճառքատեսական պալատի առաջնաշենքը՝ պահպանական






Fig. 8. Է. Քոչարի. Մելոպետը (ծառ և գյուղական)





կառնում և Զաքարիների վերջին ներկայացուցիչներից
Թարտի Զաղային՝ լավ բնորոշում եայդ կացությունը.

«...ի ժամանակս բռնակալութեան մելիք
Արշամին զմեր հայրենիս զբցնի ժաղաք լիսնէ
նույնով խել էր, զիր նորտերն էսիր կացուցեր
եւ Հանիքի նիազեցաւ ու ժաղաքս ի նիմանց
ժակեց ու շատ յանուանի մարդ ի սուր ժաշեց
ու զեկեղեցին տապալեց ու զերկիրս ի չորս
դիաց անրնակ արար ու քրիստոնէք անխնայ
լուսուեաց...» (Վիմական Տարեղիր):

XVII դարու սկզբին պարսիկները Արագածոտնը խլում
են ոսմանցիներից, և Ամիրդունե սարդարը Կոտայ-
քի և Ամրերդի գավառապետ են նշանակում Դավիթ Քա-
նաքեցուն (Ալբարտ, 156):

Շոշափածս բոլոր դարաշրջանները հարուստ կերպով
ներկայացված են նյութական կուլտուրայի հուշարձան-
ներով: Հայաստանի Փեղալական հասարակակարգում
անշուշտ կատարված շինարարությունը — Արշակունինե-
րի ժամանակ — արքունական-պետական ե, խոկ այնու-
նետե տեղի Փեղալաներն են նրա մեկենասները, վոր
ընդզրկում և նաև Բագրատունիների և Զաքարիների
յեռուն շինարարության շրջանները: Հետագա դարե-
րում, առնարարական կապիտալի շրջանում, տեղի ու-
նեցած աղքատիկ շինարարության մեջ դեր են խաղում
պլիսավորապես Նջմիածնի կաթողիկոսները, ընդհան-
րապես հոգեռարականությունը, և խոջաները:

Խոսելով նյութական կուլտուրայի հուշարձանների

մասին Արագածի շրջանում, ոլետք և ասեմ, վոր նրանց
վերաբերմամբ կատարված հետազոտական-ուսումնա-
սիրական աշխատանքները, վոր մի դարից ավելի ան-
ցալ ունեն՝ շատ քան են պարզել—նրանց ի հայտ ըե-
րելու, հավաքելու, ուսումնասիրելու և հրատարակելու
գործում. այս աշխատությունների ամփոփումը, վոր
արել ե Ալիշանը հիմնավոր կերպով—«Այրարատ»-ում:
ներկայացնում ե ամբողջ մեր միջնաշխարհը, շրջան
առ շրջան մանրազնին դիտված տեղագրական,
պատմա-հնագիտական առումով, սկսելով ամենահին
ժամանակներից: Ի՞նչ ձևով և ի՞նչ չափի խորությամբ
ու ճշտությամբ ել այդ աշխատանքը կատարված ե,
նա իր ժամանակի համար չափազանց խոշոր արժեք
և կարևոր գործ ե. այս հանգամանքն, ինարկե, չի խան-
գաբում մեղ պարզ կերպով տեսնելու ալիք մի հնույն
նկութերի այսորվա ստիպողական անհրաժեշտությունը՝
իենելով մեր սոցիալիստական շինարարության պա-
հանջներից՝ ի որո կատարելուն րանց ուսումնասիրու-
թյունը. և այդ վոչ միայն մոտեցման, մեթոդոլոգիա-
կան, իրերի և լերեռութների լուսաբանման տեսակե-
տից, այլև անգամ նյութի ծավալի ու բովանդակու-
թյան, վոր իրականում, անհամեմատ ավելի մեծ և ու-
նշանակալից, քան ալիք մենք տեսնում ենք արտացոլ-
ված հիշածս բոլոր աշխատություններում: Չմտնելով
այժմ նրանց քննության մեջ, նկատեմ միայն, իրեւ
ընդհանուր գիտողություն, վոր խնդրի առարկա լեղող
նկութական կուլտուրալի հուշարձանների ճանաչումն ու
ընորոշումը հին ուսումնասիրողների կողմից արված
ե վաշ թե իրենց իսկ (ալիք հուշարձանների) ավյալնե-
րով, այլ միմիայն ըստ այն տեղեկությունների, վոր

ռապիս են նրանց մասին դրավոր—մատենագրական աղբյուրները զվարապես եւ մասամբ նաև հուշարձանների վրա զրված արձանադրությունները։ Այս վերաբերում եւ նաև ալդ նյութերի ժամանակի վորոշմանը, մի խնդիր, առանց վորի թողնելով մթության մեջ նշութի գենեզիսը և զարգացման ընթացքը՝ անկարելի լի դիտական ֆունդամենտ ստեղծել վորեն ուսումնասիրության համար։

Այս տեսակետից մենք տեսնում ենք, վոր ալդ ուսումնասիրողների կողմից կիրառված միջոցը, այն ե՞ւ միմիայն գրավոր աղբյուրներով զեկավարվելը, նամանավանդ նրանց թվում հավասար իրավունքներով սպառութելը նաև ավանդական տեղեկությունները, վորոնք շատ հաճախ միանգամայն անհարիս են հուշարձանի իրեն ավյալների հետ (ասել, որինակ՝ ալս կոմ այն վանքը շինված ե Լուսավորչի կողմից, և ներկայիս հուշարձանն ընդունել իրեւ արդարիսին)՝ տիել և մի արդյունք, վոր վոչ միայն պակասավոր ե, թերի, ալլ ամբողջ ժամանակաշրջաններ թեական ու մութ թողնելով՝ խախտվում ե նրանց հիման վրա պատմական պրոցեսի ամբողջականությունը։


Այստեղ տուժողն ավելի մեծ չափերով լեղել են հեթանոսական և հնաբրիստոնեական շրջանները, քանի վոր նրանց վերաբերող հուշարձանները գրավոր տեղեկանքներ չունենալով իրենց մասին՝ մնացել են անճանաչելի՝ չոզագործված։ Ավելի բաղդավոր դրության մեջ չե անդամ միջնադարը, ել չեմ խոսում հընազույն ժամանակաշրջանների մասին, վորի կյանքը՝ կառված Արագածի հետ՝ չի ել զրադեցբել ուսումնա-

սիրողներին, քանի վոր նրանց վերաբերող նյութական կուլտուրալի տվյալները մնացած են չնկատված—չը հասկացված:


Արագածի միջնադարյան շինարարության նախնագույն (ավելի ճիշտ մեր թվականի առաջին դարերից) գործեր են հանդիսանում այն կորողանման արձանները, հաճախ կենդանագլուխ (շան, խողի) մարդոց բարելիեֆներով, զուտ հեթանոսական կամ խառն քրիստոնեական, կուլտալին և կենցաղային նկարներով, վորոնցով հարուստ և Թալինի—Աղիամանի շրջանը, և վորոնց բազմաթիվ որինակները նաև Հայաստանի այլ վայրերում գտնված՝ բնորոշիչ են հեթանոս-քրիստոնեական անցման շրջանի արվեստի համար (նկ. 9 և 10): Աղջի Արծակունյաց դամբարանը, վոր, ըստ պատմագրական տեղեկությունների, շինված և Դուդ դարի վերջում՝ իր թե կատաքոմբալին տիպով և թե լերկու հանդիպակաց (հյուս. և հարավ. պատերի մեջ տեղափորված) սարկոֆագներով, սանավանդ նրանց արտաքին յերեսներին, ինչպես նաև դամբարանի մուտքի վրա գտնվող բարելիեֆները հեթանոսական-քրիստոնեական խառն մատիզներով՝ միանգամայն համապատասխանում և Դուդ դարի վերջին: Այս հուշարձաններնի բացառիկ դիտական արժեք իր տիպով և դեղաբաշխութական մանրամասնություններով (նկ. 11):

Նույն այդ շրջանին են պատկանում մի շարք բերդաշներ, վորոնց մասին հիշեցի վերեւում (տես էջ 17—23):


Հայաստանի բազիլիկաները—հայ ճարտարապետական իրենց առանձնահատկություններով՝ իրեն քրիս-






Նկ. 9. Ա. Թառլին կորողարձան (Փոտո Ա. Քալանթարի) տես եջ 36.




Նկ. 10: Ալյո Թառլին կորողաբան (իռտու Ա. Բալամբարի) տես էլ 96.





ԱՀԱ. ԿԸԲԼԱՆԵՒՄՆԱ

Կա. 11. Առց. Արշակունինի պատրաստի պլանը և նախածք. Հափազըդր. Ա. Քաջալբարի, զժակար Արա.
Ակ. Տոկարին. (վերահստանակարյուն թղ Խելթանի բոլյուտոյ յանը):



տոնեական արվեստի տաճարաշինարարության սկզբան իսչոր գործեր—մեծ տարածումն ունեն Արագածի շրջանում. Փարպի, Աշտարակ («Ծիրանավորը») Յեղվարդ (Նկ. 12), Քասախ-Ապարան, Ուշի, Ոհանավանք, Եղմիածին, Ոշական, Աղց, Ալան—ուր մինչ այժմ ել աղանդանվել են բազիլիկաները (մեծ մասամբ լեռեք և ժամանի) կանոն կամ կիսավեր—ցույց են տալիս Դարդ, Երդ, Զարդ դարերի լեռուն շինարարությունը Արագածոտնում, և ապացուցում նրա ընդհանուրական կենտրոնական նշանակությունը հայկական ելլանքում:


Հաջորդ շինարարական լեռուն շրջանը Հայաստանում, ամենաբեղմնավորը—VII-րդ դարը, իր ուժեղ արտահայտությունն եւ ունեցել նաև Արագածոտնում, այս տեղ են VII-րդ դարու դերակշռող ափակերի (խաչաձև, կոլոր) ամենաեկարեսը որինակները՝ Եղմիածնական խմբում—Հոփիսիմեն (վորի շինող կոմիտաս կաթողիկոսը ծագումով Աղցեցի յեր) և Զվարթնոցը, ապա Հաջիզարայի հուշարձանը, Թալինի փոքր և մեծ (VII-VIII դ. դ.) հուշարձանները, Մաստարա, Աղիամուն, Արուճ, Յեղվարդ (Դրիզոր Մամիկոնյանի շինածը), Աշտարակ (Կարմրավորը), մի կարեսը հուշարձանի ավերակներ ինաքլուի մոտ և ալին:

IX—XI դարերի, Բագրատունյաց շրջանի, գործ և հանդիսանում Ամբերդ բերդաբանակի շինությունը (այն շենքերի, վորոնց ավերակներն այսոր ել դեռ կանգնած են, անկախ այդ ամրոցի ծագումից, վոր անշաւշտ շատ ավելի հին ե (տես Նկ. 5): Գտնվելով յերկու խոր ու անմատչելի ժայռապատ ձորերի միացման յետանկյունու վրա՝ Ամբերդ և Արխաշան գետերի միջի,

ուստի և մի կողմից միայն՝ ձորից-ձոր, ուժեղ ամբացված և պարիստներով, աշտարակներով, վորտեղ դժունվում և և զլխավոր մուտքը։ Պարիստների հետ զուգորդված կերպով շինված և նաև ապարանքը (աիրող ֆեռդալի պալատը), այսպիսով բերդաքաղաքի և դղյակի միախառնված տիպն և այստեղ Ներսի տարածությունն ամրողովին բոնված և ընալին շնչքերով։ Այստեղ և նաև, ձորերի միացման անկյան մոտ՝ Ամբերդի տաճարը, իր արագով նույնպես Հարդ դարի գործ։ Նույն Հ դարի սկզբին և պատկանում նաև Բյուրական ամրոցի շինությունը, Կոօի վանին ըստ տիպի, ամրոցն ու ջրամբարը, Ոնանալիանքը (Կաթողիկեն), Կարբի վերջերս բացված խոշոր շենքի ավերակները (նկ. 13), բարփանաւրան Արունի մոտ և ուրիշները։


XII-XIII դարերի ընթացքում, Զաքարյանների շրջանում, զլխավորակես XII-րդ դարում, շինարարություն նոր թափը, վորը և հայ արվեստի զարդացման նոր ետապն և հանդիսանում, իր լայն հասարակական բնույթով, հասարակության բոլոր խավերի մասնակցությամբ ավել և մի շարք կատարյալ դորձեր — Ռւշի, Սաղմոսավանք, Ուանավանք (զավեխթը), Հառիճ, Ցեղեր, Վատվածքնկա, Բուժմական, Կոշի արձանները, Աշաբարակի Մարինեն, Շշական (Սահմաղինի շինածը), Յեղվարդի յեռահարկ հուշարձանը (նկ. 14), Թալինի ամրոցի ներկա շենքը, քարվանսարանները և այլն։

XIV-րդ դարից սկսած այն հատ ու կենտ աշխատանքներն այդ ուղղությամբ, վոր կատարված ևն Արագածոտնում, վերաբերում են զլխավորակես XVII դարին, և ընդհանրապես նորողութիւններ ևն միայն ու.




12. Ծնողական լազարական պատճեններ (Ա. Գ. Տեղական պատճեններ)

Նկ. 13. Կոմրի. Տյառը 1951 թվականի պլիս (քառա լ. քառա լ.՝ բարեկարգություն ունեցող պլիս).





Նկ. 14. Յեղվարդ. Հուշարձան XIII դ., վոր կատարել և նայել
տմբոցի դեր (գմբերի սյամամիջերը շարլած են պաշտպանվելու
համար) (Ֆոտո Ա. Քալանքարի).



վերաբերող հարկերի և տուրքերի բաշխման կամ կարգավորման, և պարունակում են հարուստ և բազմակողմանի նյութ հարկային բոլոր սիստեմների վերաբերյալ վոր գոյություն են ունեցել դարերի ընթացքում:

Բ. Եինարարական, վոր վերաբերում են ընդհանուրապես կատարված շինարարության և հատկապես ջրաշինարարության, վորոնց հեղինակ հաճախ հանդիսանում են պատմական հայտնի անձնավորություններ:

Գ. Նվիրատուտկան (թվով ամենից շատ), այն բաղմապիսի նվերների մասին, շարժական ու անշարժ գույքի ճիշտ թվարկումով, վոր տրվել են վանքերին ֆեռուդաների կողմից իրենց շարևատությանց համար, իսկ վաճառականների կողմից՝ «հոգու փրկության»։ Այս արձանագրությունները պայմանագրեր են նվիրատուէ և հոգեորականության միջն, նվերի դիմաց վերջիններիս ստանձնած պարտականությունների՝ նվերի արժեքի համեմատ, իրեկ փոխհատուցում, տալու վորոշ քանակությամբ «ժամանակատարագներ»։ Այսպիսով այդ տվյալները վոչ միայն ծանոթացնում են ու լուսաբանում կենցաղակին բազմապիսի մոմենտներ, ինչպես և վանքերի իրավական-տնտեսական դրությունը, այլև պարագաներով արժեքի վերաբերյալ բազմաթիվ հարցեր՝ հնարավորություն են տալիս ձեւավորելու մեր տնտեսական պատմության հիմնական ելեմենտները ստույգ թվական տվյալներով։

Սրանց հետ միաժամանակ, Արագածոտնի դեկրետային յեկարագությանը վերաբերող արձանագրությունները, վորոնք իրենց թե քանակով և թե բազմագության հարատությամբ առաջնակարգ տեղ ունեն:

Հայ պիմական տարեգրության մեջ, հանդիսանում են բացառիկ զիտական արժեքի մի աղբյուր, առանց վորի անկարելի յև հյուսել մատերիալիստական Հայոց պատմությունը միշնագարում՝ իր սոցիալ-տնտեսական վոխաւարերություններով:


Ջրաշինարարության վերաբերյալ արձանագրական հարուստ ավյալները, վոր խոսում են «ջուր բերելու», ջրանցքներ, առուներ անցկացնելու, աղբյուրներ, ջրամբարներ շինելու և այլն, ինչպես և նրանց բազմաթիվ նորոգութների մասին՝ մեզ ծանոթացնում են վորովագան զործի հետ ընդհանրապես, վորը և կազմում ե տնտեսության հիմնական առանցքը: Այդ իսկ պատճառով ջրաշինարարական ամեն մի աշխատանք համարվում էր շինարարության մեջ առաջնակարգ իր նշանակությամբ. թե ինչպիսի վոգեվորությամբ եր կատարվում նման աշխատանք, մեզ դադարաց ե տալիս ժամանակակից մի նկարագրություն, վոր բարեբախտարար կա պահպած: մի հիշատակարանում: Հարցը վերաբերում է XIII-րդ դարի վերջին, Յեղվարդում կտարարված խոշոր ջրաշինարարական աշխատանքին՝ Աղբյորեկի և իր կնոջ Վախախի կողմից, վորոնք Թամախ գետից (Աստվածընկալ դյուղի մոտից) վարար ջուր են հանում (ավելի շուտ՝ նորոգում են հնուց յեղածը) և հասցնում Յեղվարդի դաշտին արևմտյան կողմից. Կույնն են անում նաև արևելյան կողմից՝ մի առու և բերելով, և այդպիսով շրջապատի բոլոր հողերը ապահովում են ջրով.


«Դնացեալ ի սուրբ ուխտն Ածընկալ եւ տեսեալ զգնացս ջրայն Նդիվարդայ աւերեալս եւ խօպանացեալ, որպես զի դեռ եւս երեւին նետք նացա, եւ

տասուածային նախախնամութեամբն վառեալ սիրտ
նոցա... արխացան՝ վոչ հաւկելով զծախսն ուպես
զուարդուն հրեղին տագնապէին՝ ոչ ունելով զհան-
գիս եւ զբուն ի տու եւ ի զիւերի, եւ շօտապատեալ
զիւտոն Արարատեան (=Արայի) հատուցին զօսւրն
յորդառատ վտակաւ փոյքընքաց յնդիվարդ, եւ
զդմվագուրիւն սանմանացն եւ զյոլով աժխատու-
րիւնս եւ զտուրա արվեստաւրացն եւ զամենայն
ծախսն ո՞վ կարէ ընդ զրով արկանել, եւ զամենաս-
նելի երկրաշափ զնեռաւորուրիւն տեղույ... որ ի բա-
դաքէն Բօնոյ մինչեւ Կարքի ոչ զտանէին զուր յար-
բումն մարդկան եւ պապակէին անցորդք նամա-
պարհոց ի տապոյ յաւուրա տարայնոյ...» (Շահ-
խաթունեան—Ստորագրութիւն, Բ. հջ. 131):

Հիշված բոլոր դարաշրջաններում վոռոգման յեղա-
նակը — գոյություն ունեցած բոլոր ջրարաշխական
սիստեմները — ընդհանուր առումով միաբնույթ են,
յերբ վոռոգման աղբյուր հանդիսացել են Արագածի
գետերը, գետակներն ու աղբյուրները, մի խոսքող՝
մշտահոս ջրերը, վորոնք արհեստական առուների մի-
ջոցով հոսել և վոռոգել են ավելի ցածրերում գտնված
հողերը: Թե արձանագրական տեղեկությունները
ջրանցքաշինարարության մասին, և թե դրան վերա-
բերող մինչև այժմ պահպանված նյութական կուլ-
տուրայի իրական վկանները — ջրանցքներ, առուներ-
արհեստական ճակներ, ջրամբարներ և այլն — այժմ
ել դեռ աշխատող — բանուկ, թէ վաղուց հանդած,
իրենց գտնված տեղերով և ամեն ուղղությամբ ունե-
ցած ընթացքով՝ զծում են ընդհանուր ցանցի մի պատ-
կեր, վոր ծածկում և մշտահոս ջրից զուրկ համարլաւ

կայ-լ-ս բանակ վերտիպոցվ. մորակ վրան մասայ ըստմահամառ ՝ լցուուրակոց ու պիտմաք 51. կ.







Ակադեմիական պատմությունների պահպանի ժամանակակից գործակագիրը

Ակադեմիական պատմությունների պահպանի ժամանակակից գործակագիրը

57





բոլոր մշակելի վայրերը, և, հետեապես, ապահովում նրանց հողերի վոսովումն ու մշակումը:

Սա տպացուց և յերկրագործության և ալգեգործության ինտենսիվ դրության — ծաղկած վիճակի, մինչ այն չափի, վոր յեղած ջուրը չի բավարարում պահանջը, և զրա հետեանքով շարունակ տեղի յեն ունենում դժություններ ու անգամ կորիմներ՝ այս կամ այն առուն ռդտագործելու համար, նման յերեսութիւննդանի պատկեր և տալիս Արուճի արձանագրությունը — IX դարու (867թվի).

«... Եղեւ կոխ ընդ յԱրուն եւ ընդ Կոս եւ ընդ Գաւառն. Եհար Արուն զիոս եւ զԳաւառն.... Ես Գրիգոր որդի Վառամա, ծառա Ամբատա Բագրատուն, Եկի նրամանաւ Ամբատա, եւ ես նաւասարեցի զջուրն ընդ Կոս եւ ընդ յԱրուն զինչ իւրեանց բնիկ ուստի էր լել՝ ա եւ կէո Կոսա, եւ ա Արնո»: (Ընթերցումն իմն է):

Մի այլ որինակ տարբեր դարաշրջանից (արձանագրություն 1571թվ. գերեզմանաքարի վրա՝ Զրվեժում):

«Այս տուն սզո, մթան... Խաչատրն է, որ սպանաւ ի վերա ցրիս Զրվիծո. կիսաւի ելի աշխարհի եւ քողի կսկիծ ծնողաց իմոց....» (Ընթերցումն իմն է տեղի վրա):

Այս գերեզմանը պաշտամունքի առարկա յե յեղեւ տեղում, իրրե ջրի համար ընկածի:

X

Նման դժբոհությունների կանխում — հարթումն ու
ջրի կարգավորում — կանոնավորումը լեղել և Հայաս-
տանում, վարչական դժվարագույն խնդիրներից մեկը,
գուցե և ամենազլիսավորը, վոր որինականացվել և
դեկրետային կարգով, և ի դիտություն ու զեկավարու-
թյուն արձանագրվել մոտակա հասարակական բնույթ
կրող շենքի — հուշարձանի պատի վրա։ Տեկորի մի
կարևոր արձանագրություն 1036 թվականի՝ պերճա-
խոս որինակ և այն դդուշավոր վերաբերմունքի, վոր
ցուց են տվել վարչական մարմինները դեպի այդ
խնդիրը։

«... Տեկորյ ջրոյս եւ Ազարակուց ուղե-
լոյ (ուղղելու) զինչ առջի քազառուցն
լէլ է։ :Գ։ աւրն եւ :Գ։ զիւեր Տեկորյ է
:Գ։ աւր եւ :Գ։ զիւեր Ազրկուց։ նարցի
ծերս եւ զիւողս նզովուի եւ երենլով (յեր-
դումով), աւղորդն այս է... ի զարնմէն ի
վեր մնացել յառունն հանապազ զայր ջուրն
լերինն անխափան» (Հնթերցումն իմն և տե-
ղի վրա)։



Հիշածս բոլոր թե դրավոր և թե մանավանդ նյու-
թական կուտուրայի տվյալները ներկալացնում են
Արագածը մեր թվականության շրջանակներում, հասց-
նելով նրա կյանքն առ առավելն մինչեւ առաջին դարերը.
սեպագրական մի հիշատակությամբ միտքն, իբրև մի
առկայծում, ինչպես տհանք, այդ հասակին ավելանում

թէշտու ցւուածք . ոչք հասանի ավելան 5

և ևս մի հազարամյակ։ Այդպես եր ահա ճանաչված Արագածը զիտության կողմից մինչեւ վերջին տասնամյակը։

1924 թվին առաջին անգամ հայտնի դարձավ մեղալիքը (մեծաքարյան) կուլտուրայի գոլությունը Արագածի վրա¹⁾։ Այդ կուլտուրայի վորոշ ելեմենտներ, վոր նախ քան այդ նկատված ելին ուրիշների կողմից, այժմ միայն մտան մի ընդհանուր ձևավորման մեջ, հավաստելով հանդերձ, վոր Արագածը նախնադարյան շատ ավելի հետավոր անցյալում հանդիսացել է կարեռը կենտրոնավայրը մարդկաբերն հասարակության համար։

Այսուհետեւ անընդհատ շարունակվող հետախուզումներով հաջողվեց մեղ պարզել մի հնագույն ամբողջաւցած կուլտուրայի դոյցությունը դիմավորակեմ Արագածում և Հայաստանի քանի մի այլ վայրերում, ներկայացված նվութական կուլտուրայի հարուստ տվյալներով, վոր պատկանում և Հայաստանի նախաբնիկներին — նախահայկական շրջանում²⁾։

Այդ կուլտուրան ամբողջացնող նյութական տվյալները հատեյալներն են, բայց մեղալիթյան հուշարձաններից, վորոնց լերեք դիմավոր տիպերն ել — դոլմենն, կրոմիկի և մանհիր՝ ներկայացված են բազմահազար որինակներով (նկ. 17, 18) զարգացման մի քանի հատվածներով՝ գիրսացիայի լեն լենթարկված այժմ

1) Այս. Քալանթար — Քարե դարը Հայաստանում. Նորք № 5—6 1925 թ. Յերևան

2) Աշխ. Քալանթար — Յերկու սեպտիմիր արձանադրություն. «Արտադիր» Հ.Հ.Պ.Կ. № 3, էջ 50—57, 1927 թ.

բնակության, կուլտի և թաղման բազմաթիվ վայրեր—
նախնական կայաններ, պարսպված բնակատեղիներ—
բերդեր, քաղաքներ, բնակարանի ու դամբարաններ
գլխավոր տիպերը (նկ. 19, 20), Զրաբաշխական մի
կարեռ սիստեմ խիտ ցանցի նման ծածկել և Ա. բա-
գածութն ամրողավին, ինչպես և Ա. դմադանը, և
վորի համար ազգյուր հանդիսացել է զոչ թե մշտահոս
ջուրը, այլ լեռնային առատ ձլունի պաշարը¹⁾:

Հայաստանի հնագույն բնակչի խոշոր չափերի հաս-
նող ջրաշինարարությունը և դրա հետ սերտորեն կապ-
ված ջրի կուլտը, վորը խոր արմատներ ու շատ մեծ
տարածումն ուներ այդ բնակչի կյանքում²⁾: Ներկա-
յացված և այն զարմանալի իրական տվյալներով,
ինչպիսիք են «վիճակները» (քարե հսկաներ՝ ձեկի նմա-
նությամբ), իրեն ամենացայտուն արտահայտիչն այդ
կուլտի, ջրի աստվածության քարե պատկերացումով,
վորոնց գոյությունը բազմաթիվ որինակներով հաս-
տատվեց նաև Արագածի վրա (նկ. 21)³⁾. Վիշապներն
առաջին անգամ հայտնադորձվել են ակադ. Մատի կող-
մից 1909—10 թ. Հայաստանում Գեղամա լեռներում⁴⁾:
Մի այլ կարեռ յերեսույթ, վոր բնորոշիչն և ու չափա-
նիշը Հայաստանի այդ հնագույն կուլտուրայի՝— զիրն

1) Աշխ. Թալանթար—Մի հնագույն ջրառաջևական սիստեմ
Խոր. Հայաստանում (տպ.).

2) Նույնի—Հին Վաղարշապատի ոլեղումները (տպ.).


3) Н. Марр—Книжная легенда об основании Киева на Руси
и Куара в Армении, изд. ГАИМК, № 278,

4) Աշխ. Թալանթար—Հ. Հ. Պոմրուկ, Գիտությունը և դիտ.-հետ-
ազիւ. Խոր. Հ. 1920—30. Եկրան 1931, № 94.


5) Н. Я. Марр и Я. И. Смирнов—Вишапы. Л. 1930 г.


Ակադեմիական հաւաքությունը կազմակերպվել է 1869 թ. Հունիսի 11-ին, գույքական կառավագական ժամանակաշրջանում՝ պատճենահանության պահին:







— Արագածոտնի պատմութեան մէջ — 5







Նկ. 19. Նախնական բնակարտան, Քարաշեմ-դոլմանամասն, Արագած-
ձի շրջ. (Փոտո Ա. Քալանքարի, Վերահրատ. Խեղինակի բաւյլությամբ).



Առաջնախութեա միացվելով՝ ոսկեածի գույքաւորութ
և պատահական աշխատանքը՝ լինելու մասին պատճենը՝ կազմակերպութեա

կա. ՀՀ. բարեգործական կազմակերպությունները կատարում են այս գործությունը՝ պահպանելով առաջարկած աշխատավորությունը՝ առանձ այլ գործությունների համար։



ե, զրի գոյությունը, վոր ունեցել ե Հայաստանի բնաւիճն այդ հեռավոր անցյալում. մեզ վիճակիվեց պարզել վոչ միայն հնագույն գրի գոյությունն Արագածի վրա, ալլև նրա մեծ տարածումը Խորհրդ. Հայաստանի բազմաթիվ այլ վայրերում, ներկայացված գրի զարդացման մի շարք ետապներով՝ սկսելով ժայռափորումների և ժայռագրությունների ամենապրիմիտիվ որինակներից, մինչև հիեռողիքյան գրի կազմակերպված սիստեմը, վոր իր խոշոր չափերով նախնական հարուստ դրականության ներկայությունն ե հալտարերում Հայաստանում¹⁾ (նկ. 22, 23):

Այս բոլորը բավականաչափ լավ պատկերում են Հայաստանի հին բնակչի սոցքաղաքական կյանքը — հասարակակարգը, տնտեսական կառուցվածքը, կուլտը և իդեոլոգիան. ոս Հայաստանի պատմության արխայիք ֆորմացիան ե՝ տոհմական հասարակությամբ, վորն ապրեց մինչև 1-ին հազարամյակը Քր. առաջ և քայլեց ու այնուհետև, ընկալ խալդական արշավանքների (VIII—VII դ. դ. Ք.-ից առաջ) հետևանքով:

Եռշափածս բոլոր նյութերը, վոր, ինչպես տեսանք, հնագույն կուլտուրայի ելեմենտներն են՝ տարածված ամբողջ Հայաստանում, իրեն գիտական խոշոր արժեքներ (վորոնց հրատարակումը, սակայն, գիտության

¹⁾ Редкая находка в Армении—Информационный бюллетень ВОКС, № 9—10, 1927 стр. 19.

Աշխ. Քաղաքացիական մատուցումները արձանագր. Որագիր № 3 էջ 53—54.


Ա. Calantar—I geroglifici scoperti in Armenia [Le Orfane Armene, Torino. № 5, 1927. էջ 74—5]

Ա. Kalantar—Inscriptions d'Arménie en caractères inconnus. Revue Archéologique, 1939. էջ 43—45]


սեփականություն դարձնելը դժբախտաբար ձգձգվեց
և այժմ միայն կատարվում ե) ¹⁾ , և մի նոր եջ են բանում
քաղաքակրթության պատմության մեջ — նրա դենե-
զիսը և սկզբնաղբյուրները պարզելու և ճանաչելու
տեսակետից . և Արագածի դերն ու նշանակությունն
այդ դեպքում հանդիսանում ե բացառիկ՝ ընդհանուր
դիտական հետաքրքրության համար, իբրև հնագույն
առաջնակարգ կենտրոններից մեկը :

1933 թ. սկսումուն

¹⁾ Ազիս. Քալանթար - Հայաստանը իր պատմության արխայի ը-
րջանում:



Նկ. 23. Նշանագիր.Մի սրբակ Հայաստանի նորահայտ եթևողիկ գրականությունից (Ֆոտո Ա. Քալամբարի, վերահրատ. Անդիմակի բայլուվուրյամբ).



ՊՐՈԼԵՏ-ՏՈՒՐԻՉՄԻ ԴՐՈՎ, ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԻ, ՀԵՏԵՎԾԱԼ ԳՐԹԵՐԸ


1. Դերենիկ Սարոյան — «Պրոլետ-տուրիզմի մասին»
2. Անդրեյեվ — «Ենթական կոմյերիտմիուրյունը յեկ պրոլետ-տուրիզմը»...
3. Յ. Գ. Կարովիկին — «Եվրակուրախոն-տուրիստական աշխատանքը պիտօներական կոլեկտիվում»
4. Ռազմական սեկցիա — «Ի՞նչ է ռազմական տուրիզմը»
5. Խնձ. Կարապետյան — «Արագած լեռը»
6. Զ. Կորկոսյան — «Արագածի մարշրուտները իր ժարտեղով»
7. Զ. Կորկոսյան — «Մի որյա մարշրուտները Յերեվանում, Լեռինականում յեկ Ղարաբիլիսյում ու Օրանց շրջակայքում»
8. Պրոֆ. Մ. Թումանյան — «Արագածի կուլտուրական բույսերը»
9. Ա. Միքամանյան — «Ի՞նչ է հողը յեկ ի՞նչպիսի հողեր կան խօսեք. Հայաստանում»
10. Պրոֆ. Աշխ. Քալանթար — «Արագածը պատմուրյան մեջ»

Լույս են տեսել Հայաստանի տեսարաններից — բաց նամակներ, փորոնք վաճառվում են Պետրատի խանութներում. վերոհիշյալ դրերը պահանջեցեք Պետրատի գրախանութներից:

ՊԱՏՐԱՍ⁴ ԵՆ ՏՊԱՆՐՈՒԹՅԱՆ

1. Կորկոսյան Զ. — «Արագածի տեղագրաւրյունը յեկ ազգաբնակչությունը»
2. Դ. Լեռնյան, Դարյան, Սարյան.
3. Կորկոսյան և Վ. Արխոտակեսյան — «Արագածի առողջապահ արշավի արդյունքները յեկ տպավորուրյուններ Արագածից»
4. Ա. Գարբելյան — «Բաշզյանի» — «Գեղարդ»
5. Դր. Զախիրյան — «Ավտոմոբիլ ու Արմենիա» (для туристов) ուղարկեն:
6. Տ. Ստեփանյան — «Բայիլու տեխնիկան».
7. Դ. Սարյան — «Ի՞նչ է պրոլետարական տուրիզմը»
8. Ստեփանյան — «Ենթական»
9. Վ. Արխոտակեսյան — «Յերեվանն իր երակուրախոն որյեկտներով»

ՊՐՈԼԵՏ-ՏՈՒՐԻՉՄԻ ՅԵԿ ԵԲՍԿՈՒՐՍԻՈՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐ. ԽՈՐՀՈՒՐԴ.



Lep

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043400

(354)

9816 1 П-50 4.



Проф. АШХАРБЕК КАЛАНТАР
АРАГАЦ
в истории
Газ ССРА Әрпікевъ